ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
CW-NCB-LRNIP-2015/2
(ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 և ՉԱՓԱԲԱԺԻՆ 2)

Հայաստանի Հանրապետություն
Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր
Վարկի No. 8229-AM
Պայմանագրի անվանումը՝ Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արևածագ-Կարմիր Աղեղ-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-M6 կմ15+706-կմ21+900 (չափաբաժին 1) և Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արևածագ-Կարմիր Աղեղ-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-M6 կմ21+900-կմ28+240 (չափաբաժին 2)
Հղում No.(ըստ Գնումների պլանի)՝12

1.Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է վարկային միջոցներ՝ Կենսական Նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով, և մտադիր է այդ գումարից վճարումներ կատարել Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արևածագ-Կարմիր Աղեղ-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-M6 կմ15+706-կմ21+900 (ՀՀ, Լոռու մարզ) և Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արևածագ-Կարմիր Աղեղ-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-M6 կմ21+900-կմ28+240 (ՀՀ, Լոռու մարզ) ճանապարհահատվածների վերականգնման պայմանագրերի շրջանակներում: Այս պայմանագրերը իրականացվելու են Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացն իրականացվելու է ՀԲ-ի կողմից սահմանված կանոնների և ընթացակարգերի պահանջների համաձայն:

2.ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը հրավիրում է ներկայացնելու փակ հայտեր իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող հայտատուների կողմից Պայմանագիր CW-NCB-LRNIP - 2015/2 ներքո Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արևածագ-Կարմիր Աղեղ-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-M6 կմ15+706-կմ21+900 (չափաբաժին 1) և Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արևածագ-Կարմիր Աղեղ-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-M6 կմ21+900-կմ28+240 (չափաբաժին 2) ճանապարհային հատվածների վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար: Աշխատանքները ներառում են՝ գոյությունունեցող ենթահիմքի քանդում և նոր ենթահիմքի կառուցում, նոր խճային հիմքի կառուցում, ասֆալտե ծածկույթ, փոսային նորոգում, հարթեցնող շերտի տեղադրում, ասֆալտ-բետոնե շերտի տեղադրում, ջրահեռացում, ճանապարհային անվտանգության ապահովման աշխատանքներ: Աշխատանքները պետք է ավարտել մինչև **2016թ. նոյեմբերի 30-ը**:

Մրցութային փաստաթղթերը պահանջում են, որպեսզի հայտատուները ունենան հետևյալ հատուկ փորձը.

Չափաբաժին 1

• Նմանատիպ պայմանագրերի իրականացում, որոնք հաջողությամբ և փաստացի ավարտվել են որպես հիմնական կապալառու, համատեղ ձեռնարկության անդամ, կամ ենթակապալառու 2010թ. հունվարի 1-ից մինչ հայտի ներկայացման վերջնաժամկետը: Մեկ պայմանագիր առնվազն 365,000, 000 ՀՀ դրամ (կամ համարժեք 760,000 ԱՄՆ դոլար) արժողությամբ կամ 2 պայմանագիր՝ յուրաքանչյուրն առնվազն 182,500,000 ՀՀ դրամ (կամ համարժեք 380,000 ԱՄՆ դոլար) արժողությամբ: Նմանությունը պետք է հիմնված լինի իրականացված աշխատանքների ծավալի, բարդության , մեթոդների/տեխնոլոգիայի վրա:

• Ստորև նշված հիմանական աշխատանքների իրականացման փորձառություն.

-Հողային աշխատանքներ՝ նվազագույնը 6,000մ^{3}վերջին հինգ տարիների ընթացքում ցանկացած տարվա մեջ

-Ճանապարհածածկի կառուցման աշխատանքներ՝ նվազագույնը 30,000մ^{2}վերջին հինգ տարիների ընթացքում ցանկացած տարվա մեջ

-Ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ՝ նվազագույնը 320 գծ.մ վերջին հինգ տարիների ընթացքում ցանկացած տարվա մեջ

Չափաբաժին 2

• Նմանատիպ պայմանագրերի իրականացում, որոնք հաջողությամբ և փաստացի ավարտվել են որպես հիմնական կապալառու, համատեղ ձեռնարկության անդամ, կամ ենթակապալառու 2010թ. հունվարի 1-ից մինչ հայտի ներկայացման վերջնաժամկետը: Մեկ պայմանագիր առնվազն 670,000, 000 ՀՀ դրամ (կամ համարժեք 1,395,000 ԱՄՆ դոլար) արժողությամբ կամ 2 պայմանագիր՝ յուրաքանչյուրն առնվազն 335,000,000 ՀՀ դրամ (կամ համարժեք 697,500 ԱՄՆ դոլար) արժողությամբ: Նմանությունը պետք է հիմնված լինի իրականացված աշխատանքների ծավալի, բարդության , մեթոդների/տեխնոլոգիայի վրա:

• Ստորև նշված հիմանական աշխատանքների իրականացման փորձառություն.

-Հողային աշխատանքներ՝ նվազագույնը 15,000 մ^{3}վերջին հինգ տարիների ընթացքում ցանկացած տարվա մեջ

-Ճանապարհածածկի կառուցման աշխատանքներ՝ նվազագույնը 33,500մ^{2}վերջին հինգ տարիների ընթացքում ցանկացած տարվա մեջ

-Ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ՝ նվազագույնը 3,100 գծ.մ վերջին հինգ տարիների ընթացքում ցանկացած տարվա մեջ

3.Մրցույթը կիրականացվի Համաշխարհային Բանկի կողմից ընդունված և 2011թ հունվարին հրապարակված <<Ուղեցույցներ: ՄԶՎԲ վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում վարկառուների կողմից ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ>>ուղեցույցներով (Գնումներիուղեցույց) սահմանված գործընթացների կազմակերպմամբ՝ Ազգային Մրցակցային Մրցույթի եղանակով: Մրցույթը բաց է Գնումներիուղեցույցում սահմանված բոլոր իրավասու հայտատուների համար: Ի լրումն, խնդրում ենք անդրադառնալ 1.6 և 1.7 կետերով սահմանված շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային Բանկի քաղաքականությանը:

4.Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկություններձեռք բերել ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկից պրն. Կ. Բադալյանից, kbadalyan@transportpiu.am և ուսումնասիրել դրանք ստորև նշված հասցեում՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին ժամը 09:00-ից մինչև 17:00:

5.Հետաքրքրված իրավասու հայտատուների կողմից ամբողջական մրցութային փաթեթը անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերելստորև նշված հասցեով գրավոր դիմում ներկայացնելու և 50,000 ՀՀ դրամ (կամ համարժեք 105 ԱՄՆ դոլար) գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է՝ բանկային փոխանցումը հետևյալ հաշիվներին.

Շահառու . ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարություն << Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկ
ՀՀ դրամի համար. Հաշիվ #900000908096
ԱՄՆ դոլարի համար. Հաշիվ #900000908104
ՀՀ Կենտրոնական բանկ

Մրցութային փաստաթղթերը կառաքվեն օդային փոստով՝ Երևանից դուրս առաքելու համար, և առաքիչի միջոցով Երևան քաղաքի տարածքում: Երևանից դուրս առաքելու դեպքում առաքման համար պետք է գանձվի լրացուցիչ 120,000 ՀՀ դրամ (կամ համարժեք 250 ԱՄՆ դոլար):

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև **2015թ. ապրիլի 14-ը, ժամը 15:00**: Չի թույլատրվում ուղարկել հայտերը էլեկտրոնային փոստով: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտեր կբացվեն **2015 ապրիլի 14-ին, ժամը 15:01** (Երևանի ժամանակով) մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ՝ստորև նշված հասցեով:

7.Հայտը պետք է ուղեկցվիմրցույթին մասնակցելու երաշխիքով՝

•CW-NCB-LRNIP-2015/2 չափաբաժին 1- **9 200 000 (ինը միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:**

•CW-NCB-LRNIP-2015/2 չափաբաժին 2 –**17 000 000 (տասնյոթ միլիոն) ՀՀ դրամ:**

8.Վերևում նշված հասցեն է՝

<<Տրանսպորտի ԾԻԳ>>ՊՀ սենյակ N312ա
պրն. Է. Սարգսյանին, <<Տրանսպորտի ԾԻԳ>>ՊՀտնօրեն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ՀՀ, Երևան 0010, Նալբանդյան 28
Հեռ.՝ (+37410) 58 05 23,
Ֆաքս՝ (+37460) 54 05 25
Էլ. փոստի հասցե՝ esargsyan@transportpiu.am, kbadalyan@transportpiu.am